Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի
ավագանու 2026թ. փետրվարի 10-ի № 12-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ք. ՔԱՋԱՐԱՆ և Գ. ԳԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու որոշում 25 06 2024թ. N 42-Ա և ՀՀ 2025 թվականի պետական բյուջե ՀՕ-471-Ն 04.12. 2024 թ. :

1. Ծրագրի սկիզբը և ավարտը՝ 01.04.2025թ- 20.12. 2025թ. :

2. Ծրագրի նախագծային արժեքը՝ 301 516,0 հազ. դրամ, որից 272615,2 հազ. դրամ՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և 28900,77 հազ. դրամ՝ համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝

1.Քաջարան համայնքի Գեղի բնակավայրում առկա էր ջրային ռեսուրսների կառավարման ցածր արդյունավետություն,որի հիմք է հանդիսանում գետերը սնուցող վտակների անբարեկարգ վիճակը:

Ծրագրով նախատեսվել է իրականացնել վտակների բարեկարգման աշխատանքներ:

2 Քաջարան բժշկական կենտրոնի մատուցած ծառայությունների մակարդակը բարձրացնելու նպատակով ծրագրում նախատեսվել է ձեռքբերել բժշկական սարքավորումներ:

4. Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝

1. Բնակավայրում կբարձրանա ջրերի օգտագործման արդյունավետությունը, ջուրը հավասարապես կբավարարի բոլորին:

2. Քաջարանի բժշկական հաստատությունը կունենա նոր սարքավորումներ, որը կբարձրացնի ծառայությունների մատուցման որակը:

5. Ծրագրի շահառուները՝

1. Գյուղի բնակիչները, գյուղում գյուղացիական տնտեսություններ հիմնող գործարարները:

2. Համայնքի բոլոր բնակիչները, բժշկական կենտրոնի բուժանձնակազմը:

6. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝

Հիմք ընդունելով առկա խնդիրները ծրագրով նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Գեղի գյուղական բնակավայրում Գեղանուշ գետի հունի կարգավորման և կողային հենապատերի ամրացման, ջրընդունիչ հանգույցի կառուցման, ոռոգման ջրատարի անցկացման աշխատանքներ:
2. Քաջարանի բժշկական հաստատության համար ձեռքբերել բժշկական սարքավորումներ:

Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝ 240640,0 հազ. դրամ, որից 4790,0 հազ. դրամ, համայնքային միջոցների հաշվին, ծախսվել է Գեղի գյուղական բնակավայրում Գեղանուշ գետի հունի բարեկարգման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և փորձաքննության համար: 235850,0 հազ. դրամ իրականացվել է պետական միջոցների հաշվին:
2. Ծրագրի փաստացի շահառուները՝
1.Ծրագրի ուղղակի շահառուներն են՝
գյուղի բնակիչները, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Գեղի գյուղում բնակության հաստատած ընտանիքները:
2. Քաջարան համայնքի բոլոր բնակիչները
3. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝
1. Իրականացվել է Գեղանուշ գետի հունի կարգավորման և բարեկարգման աշխատանքներ:
2.Ձեռք է բերվել բժշկական սարքավորումներ:

4. Ծրագրի իրականացնողները և աջակցողները՝ Քաջարան համայնք- համայնքային կառավարչական հիմնարկ:
5. Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝ իրականացվել են ծրագրով նախատեսած բոլոր միջոցառումները:
6. Հաշվետվության հրապարակում՝ Քաջարան համայնքի պաշտոնական կայք kajaran.am:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ